

Tdap պատուաստ

Ի՞նչ պետք է իմանաք

(Պրկախտ, Դիֆթերիա եւ Կապոյտ հազ)

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis

Պատուաստի վերաբերեալ շատ յայտարարութիւններ կը գտնուին սպաներէնով եւ այլ լեզուներով: Տե՛ս <http://www.immunize.org/vis>

1 Ինչո՞ւ պատուաստ ստանալ

Պրկախտը, դիֆթերիան եւ կապոյտ հազը կրնան շատ վտանգաւոր հիւանդութիւններ ըլլալ, նոյնիսկ դեռահասներու եւ չափահասներու համար: Tdap պատուաստը կրնայ պաշտպանել մեզ այս հիվանդութիւններէն:

ՊԴԿԱԽՏԸ (անշարժացած ծնօտ) կը յառաջացնէ մկանային ցաւոտ ջղաձգութիւններ եւ կարծրութիւն՝ սովորաբար ամբողջ մարմնով մէկ:

- Ան կրնայ զլուխի եւ պարանոցի մկաններու պրկուելուն պատճառ դառնալ, այդ իսկ պատճառաւ հիւանդը չի կրնար բանալ բերանը կամ կլլել, իսկ յաճախ նոյնիսկ շնչել: Պրկախտը կը սպաննէ վարակուած 5 անձերէն 1-ը:

ԴԻՖԹԵՐԻԱՆ կրնայ պատճառ դառնալ կոկորդիի ետըր ծածկուած հաստ թաղանթ յառաջացնելու:

- Ան կրնայ շնչառական խնդիրներու, անդամալուծութեան, սրտի անբարարութեան եւ նոյնիսկ մահուան պատճառ դառնալ:

ԿԱՊՈՅՏ ՇԱԶԸ կը յառաջացնէ հազի ծանր նոպաներ, որոնք կրնան յանգեցնել շնչառութեան դժուարութեան, փսխելու եւ քունի խանգարումի:

- Ան զօրաւոր հազի պատճառով կրնայ յառաջ բերել մարմնի քաշի կորուստ, անկղապահութիւն/անմիզապահութիւն եւ կողերու կոտրուածքներ: Կապոյտ հազով հիւանդացող 100 դեռահասներէն մինչեւ 2 եւ 100 չափահասներէն 5-ը հիւանդանոց մտնելու կամ բարդութիւններ կունենան, ներառեալ թոքերու բորբոքում եւ մահ:

Այս բոլոր երեք հիւանդութիւնները կը յառաջանան մանրէներէն: Դիֆթերիան եւ կապոյտ հազը կը փոխանցուին անձէ անձ՝ հազէն կամ փոկզտալէն: Պրկախտը մարմին կը մտնէ կտրուածքներու, քերծուածքներու կամ վերքերու միջոցով:

Միացեալ Նահանգներու մէջ մինչեւ պատուաստներու յայտնաբերումը՝ ի յայտ կու գային դիֆթերիայի եւ կապոյտ հազի տարեկան աւելի քան 200.000 դէպքեր, իսկ պրկախտի՝ հարիւրաւոր դէպքեր: Այդ ժամանակէն ի վեր պրկախտի եւ դիֆթերիայի դէպքերը նուազած են մօտ 99 առ հարիւր տոկոսով, իսկ կապոյտ հազինը՝ 80 առ հարիւրով:

2 Tdap Պատուաստ

Tdap պատուաստը կարող է պաշտպանել դեռահասները եւ չափահասները պրկախտէն, դիֆթերիայէն եւ կապոյտ հազէն: Tdap-ի մէկ դեղաչափ սովորաբար տրվում է 11 կամ 12 տարեկանին: Այն մարդիկ, ովքեր Tdap չեն ստացած այդ տարիքին, պետք է այն ստանան որքան հնարաւոր է շուտ:

Tdap-ը մասնաւորապէս կարեւոր է առողջապահական բնագաւառէն ներս գործող մասնագէտներու եւ 12 ամսականէն փոքր մանուկներուն հետ մտ շփում ունեցող անձերուն համար:

Յոյի կիները պետք է Tdap մէկ դեղաչափ ստանան իւրաքանչիւր յոյութեան ժամանակ նորածին երեխան կապոյտ հազէն պաշտպանելու համար: Ամենէն շատ վտանգի տակ են մանուկներ, ում մտ կապոյտ հազի պատճառաւ ծանր, կեանքին վտանգ սպառնալու աստիճանի բարդութիւններ կրնան յառաջանալ:

Նման մի պատուաստ, որը Td կը կոչուի, կը պաշտպանի պրկախտէն եւ դիֆթերիայէն, բայց ոչ կապոյտ հազէն: Td-ի դեղաչափը պետք է տրուի 10 տարին մէկ: Tdap-ը կարող է տրուել որպէս այս դեղաչափերէն մէկը, եթէ դուք նախկինում այն չէք ստացել: Tdap-ը նաեւ կրնայ տրուիլ ծանր կտրուածքէն կամ այրոցէն ետք՝ պրկախտի վարակից պաշտպանուելու համար:

Ձեր բժիշկը կրնայ ձեզ հավելելալ տեղեկութիւններ տալ:

Tdap-ը կարող է տրուել մյուս պատուաստների հետ միեւնոյն ժամանակ:

3 Որոշ մարդիկ պետք չէ պատուաստ ստանան

- Եթէ Դուք պրկախտի, դիֆթերիայի կամ կապոյտ հազի պատուաստ պարունակող դեղաչափէն վերջ ունեցած էք կեանքին վտանգ սպառնացող զգայութեան հակազդեցութիւն ԿԱՄ՝ եթէ դուք լուրջ զգայութիւն ունիք այս պատուաստի ռեւէ բաղադրիչին հանդէպ, պետք չէ Td կամ Tdap ստանաք: Ձեր բժիշկին տեղեկակ պահեցէ՛ք, եթէ ռեւէ լուրջ հակազդեցութիւն (ալերժի) ունիք:
- Եթէ դուք DTP-ի կամ DTap-ի դեղաչափը ստանալէն 7 օրեր ետք թմբիկ, երկարատև կամ բազմակի ցնցումներ եք ունեցեր, պետք չէ Tdap ստանաք, մինչև որ պատուաստէն բացի այլ պատճառ չյայտնաբերուի: Դուք դեռ կրնաք Td ստանալ:
 - լուսնոտութիւն կամ նեարդային համակարգի այլ խնդիրներ ունիք,
 - Պրկախտ, դիֆթերիա եւ կապոյտ հազ պարունակող ռեւէ պատուաստ ստանալէն ետք ունեցեր եք սաստիկ ուռեցք կամ ցաւ,
 - ունեցեր եք Guillain Barré ախտանիշը (Guillain Barré ախտանիշը նեարդային խանգարում է: Նեարդներու սուր եւ արագ զարգացող բորբոքում է, որ զգայունութեան կորուստի եւ մկաններու թուլութեան պատճառ կը հանդիսանայ:
- Պատուաստ ստանալու օրը անհանգիստ եք:



4 Պատուաստի հետ կապուած վտանգները

Պատուաստի, ինչպէս եւ ցանկացած դեղորայքի հետ, միշտ առկայ է կողմնակի ազդեցութեան վտանգ: Դրանք սովորաբար մեղմ կըլլան եւ իրենք զիրենք կանցնին, բայց հնարավոր են նաեւ լուրջ հակազդեցութիւններ:

Ուշաթափութեան կարճատև ստանալէ կարող են յարաջանալ պատուաստը ստանալէն ետք եւ կարող են ուշաթափութեան պատճառաւ փաստածք յարաջանել: Պատուաստ ստանալէ ետք 15 վայրկեան նստիլ կամ պառկիլ կրնան կանխարգիւել ուշաթափութիւնը եւ իյնալու պատճառով յարաջանած փաստածքները: Ձեր բժիշկին տեղեկեցուցէ՛ք, եթէ գլխապտոյտի զգացողութիւն, կամ տեսողութեան փոփոխութիւններ կամ ականջներուն մէջ զնգոց ունիք:

Թեթեւ խնդիրներ Tdap ստանալէն ետք (Գործողութեան միջամտութիւն չպահանջող)

- Ցաւ ներարկման տեղը՝ (4 դեռահասէն 3-ի եւ 3 չափահասէն 2-ի մօտ)
- Ներարկման տեղը կարմրութիւն կամ ուռեցք՝ (5-էն 1-ի մօտ)
- Թեթեւ ջերմ՝ նուազագոյնը 100.4°F-ի չափով՝ (25 դեռահասէն 1-ի եւ 100 չափահասէն 1-ի մօտ)
- Գլխացաւ՝ (10-էն 4 դեռահասի եւ 10-էն 3 չափահասի մօտ)
- Յոգնածութիւն՝ (3-դեռահասէն 1-ի եւ 4 չափահասէն 1-ի մօտ)
- Սրտխառնուք, փսխում, փորհարութիւն, ստամոքսի ցաւ՝ (4 դեռահասէն 1-ի եւ 10 չափահասէն 1-ի մօտ)
- Դող, մարմնի եւ յօդացաւեր, մորթի վրայ ցաներ, այտուցուած զեղձեր՝ (հազուադէպ)

Չափաւոր խնդիրներ Tdap ստանալէն ետք (Գործողութիւններու միջամտութիւն, բայց ոչ-բժշկական ուշադրութիւն պահանջող)

- Ցաւ ներարկման տեղը՝ (20 դեռահասէն 1-ի եւ 100 չափահասէն 1-ի մօտ)
- Կարմրութիւն կամ այտուցուածութիւն ներարկման տեղը (16 դեռահասէն 1-ի եւ 25 չափահասէն 1-ի մօտ)
- Ջերմ՝ 102°F-ի չափով՝ (100 դեռահասէն 1-ի եւ 250 չափահասէն 1-ի մօտ)
- Գլխացաւ (20 անչափահասէն 3-ի մօտ կամ 10 չափահասէն 1-ի մօտ)
- Սրտխառնուք, փսխում, փորհարութիւն, ստամոքսի ցաւ՝ (100 մարդէն 1-3-ի մօտ)
- Այտուց՝ ներարկում կատարած ամբողջ ձեռքի վրայ (100 մարդէն մինչեւ 3-ի մօտ)

Ծանր խնդիրներ Tdap ստանալէն ետք (Միշտ կատարուող գործողութիւնները կատարելու անկարողութիւն. կը պահանջուի բժշկական ուշադրութիւն)

- Այտուցուածութիւն, սուր ցաւ, արիւնահոսութիւն եւ կարմրութիւն այն ձեռքին, ուր ներարկում եղած է՝ (հազուադէպ):

Ծանր զգայութեան հակազդեցութիւն կրնայ յարաջանալ ցանկացած պատուաստէն ետք (մօտաւորապէս կենթադրուի, որ անոնք կը յարաջանան միլիոն դեղաչափ ստացողէն մէկ անգամէն պակաս պարագաներուն):

DCH-1281A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

5 Ի՞նչ ընել, եթէ կայ ծանր հակազդեցութիւն

Ես ի՞նչ պէտք է փնտռեմ
• Փնտռէք ամեն բան, որ ձեզի կը մտահոգէ, օրինակ՝ ծանր զգայութեան հակազդեցութեան նշաններ, շատ բարձր ջերմ կամ բնավորութեան փոփոխութիւններ:

Ծանր զգայութեան հակազդեցութեան նշանները կրնան ներառել շնչելու դժուրութիւն, թուլութիւն, խոպոտութիւն կամ խզխզոցով ծանր շնչառութիւն, սրտի արագ բաբախում, եղնջատենք, գլխապտոյտ, գունատութիւն կամ կոկորդի այտուցուածութիւն: Այն կը յայտնուի ներարկումէն ետք քանի մը վայրկեանէն մինչեւ քանի մը ժամուան ընթացքին:

Ես ի՞նչ պէտք է ընեմ
• Եթէ դուք կը կարծէք, որ այն լուրջ զգայութեան հակազդեցութիւն կամ այլ ստիպողական վիճակ մըն է, հեռաձայնէ՛ք 9-1-1 կամ այդ անձին հիւանդանոց փոխադրէք: Այլապէս ձեր բժիշկը կանչեցէ՛ք:

• Ետքը, այս հակազդեցութեան մասին պէտք է զեկուցել Պատուաստէն ստացած փաստածքի փոխհատուցման համակարգին (VAERS): Ձեր բժիշկը կարող է լրացնել այս զեկույցը կամ դուք կարող եք անել՝ VAERS-ի կայքէջի միջոցով՝ www.vaers.hhs.gov կամ հեռաձայնելով 1-800-822-7967 հեռաձայնի թիւով:

VAERS-ը միայն հակազդեցութեան մասին զեկուցելու համար է: Այն բժշկական խորհրդատուութիւն չի տրամադրէր:

6 Պատուաստէն ստացած փաստածքի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատուաստէն ստացած փաստածքի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP)-ը դաշնակցային ծրագիր է, որը ստեղծուեցաւ հատուցանելու այն մարդկանց, ովքեր որոշակի պատուաստներէն փաստածք ստացած են:

Մարդիկ, որոնք վատահ են, որ իրենք փաստած են պատուաստի պատճառով, ծրագրի մասին կրնան տեղեկանալ եւ հայց ներկայացնել հեռաձայնելով հետեւեալ թիւով 1-800-338-2382 կամ այցելել VICP-ի հետեւեալ կայքէջը՝ www.hrsa.gov/vaccinecompensation

7 Ի՞նչպէս կրնամ աւելին իմանալ

- Հարցրէ՛ք ձեր բժիշկին:
- Հեռաձայնեցէ՛ք ձեր տեղական կամ նահանգային առողջապահութեան վարչութիւն: 1-888-767-4687
- Կապ հաստատեցէ՛ք հիւանդութեան վերահսկման եւ կանխարգիւման կէդրոնի (CDC) հետ՝ - Հեռաձայնեցէ՛ք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) թիւով, կամ - Այցելեցէ՛ք CDC-ի կայքէջը՝ www.cdc.gov/vaccines


Vaccine Information Statement (Interim)

Tdap Vaccine

5/9/2013 ARMENIAN

42 U.S.C. § 300aa-26
Translation provided by the California Department of Public Health

Office Use Only



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավահավասար վերաբերող էջը ստեղծելու, պատվաստումների գնահատականները եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամքապահովողից, որպէսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: